DEPARTMENT OF DEVELOPMENTAL SERVICES
1215 O Street, MS 9-60
Sacramento, CA 95814
TTY: 711
(916) 654-1897

5 օգոստոսի 2021 թ.

ՈՒՄ՝ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆՆԵՐԻՆ

ԹԵՄԱ՝ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆ

Զարգացման ծառայությունների բյուջետային նախնական օրինագիծը, AB 136 (Գլուխ 76, 2021 թվականի Կանոնադրություն), փոփոխվել է Բարեկեցության և հաստատությունների (W&I) օրենսգրքի բաժինը 4512՝ ընդլայնելու Lanterman-ի Զարգացման հաշմանդամության ծառայությունների մասին օրենքի (Լանտերմանի օրենք) ծառայությունների իրավասությունը՝ երեք կամ չորս տարեկան երեխային թույլ տալով ժամանակավորապես իրավասու լինել տարածքային կենտրոնի ծառայություններից՝ սահմանված պայմաններով: Այս բաժինը նաև ուրվագծում է երեխայի գնահատման և վերագնահատման գործընթացը որոշակի ժամանակահատվածում: Սույն փոփոխություններն ուժի մեջ են մտել 2021 թ. հուլիսի 16-ից:

Համաձայն W&I օրենսգրքի 4512(a)(2) բաժնի, եթե երեք կամ չորս տարեկան երեխան այլ կերպ իրավասու չէ տարածքային կենտրոնի ծառայություններից օգտվելու զարգացման հաշմանդամության հետևանքով, ինչպես նշված է W&I օրենսգրքի 4512(a)(1) բաժնում, ապա երեխան պետք է ժամանակավորապես իրավասու լինի տարածքային կենտրոնի ծառայություններից օգտվելու համար, եթե երեխան ունի հաշմանդամություն, որը ոչ միայն ֆիզիկական բնույթ է կրում և ունի զգալի ֆունկցիոնալ սահմանափակումներ կյանքի հիմնական գործունեության հետևյալ ոլորտներից առնվազն երկուսում՝ տարածքային կենտրոնի կողմից որոշված և երեխայի տարիքին համապատասխան.

1. Ինքնախնամք
2. Արտահայտիչ և ընկալունակ լեզու
3. Ուսուցում
4. Շարժունակություն
5. Ինքնուղղորդում

Ժամանակավորապես իրավասու լինելու համար երեխայից չի պահանջվում ունենալ W&I օրենսգրքի 4512(a)(1) բաժնում թվարկված զարգացման խանգարումներից մեկը: Early Start-ից դուրս եկած երեխան կարող է իրավասու լինել Լանտերմանի օրենքի ծառայությունների համար՝ համաձայն նախնական իրավասության չափանիշների: Նմանապես, երեք կամ չորս տարեկան երեխան, ով չի ստացել Early Start-ի ծառայություններ, կարող է ժամանակավորապես իրավասու լինել: Կից ներկայացված է գծապատկեր, որը համեմատում է Լանտերմանի օրենքի պահանջները ծառայությունների համար՝ համաձայն W&I օրենսգրքի 4512(a)(1) բաժնի և ժամանակավոր իրավասությունը՝ համաձայն 4512(a)(2) բաժնի: Ինչպես այն անհատներին, ովքեր իրավասու են W&I օրենսգրքի 4512(a)(1) բաժնի համաձայն, երեխան, ով որոշվում է, որ ժամանակավոր իրավասու է, պետք է լրացրած լինի Հաճախորդի զարգացման գնահատման հաշվետվությունը և անհատական ծրագրի պլանը:

Տարածքային կենտրոնի գործադիր տնօրեններ
5 օգոստոսի 2021 թ.
Էջ երկրորդ

Վաղ միջամտության ծառայություններ ստացող 3-12 ամսական և 1-5 տարեկան երեխաների գնահատում
Տարածզային կենտրոնից վաղ միջամտության ծառայություններ ստացող 3-12 ամսական կամ փոքր երեխաները, համաձայն Կառավարության օրենսգրքի 95014 բաժնի, պետք է գնահատվի տարածքային կենտրոնի կողմից երեք տարեկան դառնալու օրվանից առնվազն 90 օր առաջ՝ լանտերմանի օրենքի ծառայությունների համար նրանց իրավասությունը որոշելու նպատակով: Այդ գնահատումը նախ պետք է որոշի, թե արդյոք երեխան ունի զարգացման խանգարում W&I օրենսգրքի 4512(a)(1) բաժնի համաձայն: Եթե տարածքային կենտրոնը որոշի, որ երեխան չունի զարգացման հաշմանդամություն, տարածքային կենտրոնը պետք է որոշի, թե արդյոք երեխան ժամանակավորապես իրավասու է Լանտերմանի օրենքի ծառայությունների համար: Եթե տարածքային կենտրոնը որոշի, որ երեխան չունի զարգացման հաշմանդամություն և ժամանակավորապես իրավասու չէ Լանտերմանի օրենքի ծառայությունների համար, ապա տարածքային կենտրոնը պետք է համապատասխան ծանուցում տա՝ համաձայն W&I օրենսգրքի 4701 բաժնի:

Երեք կամ չորս տարեկան երեխաների գնահատում, ովքեր ուղղորդվում են Տարածքային կենտրոն
Տարածքային կենտրոն ուղարկված երեխան, ով երեք կամ չորս տարեկան է և չի ստացել վաղ միջամտության ծառայություններ, պետք է գնահատվի W&I օրենսգրքի 4643 բաժնի համաձայն: Այդ գնահատումը նախ պետք է որոշի, թե արդյոք երեխան ունի զարգացման խանգարում W&I օրենսգրքի 4512(a)(1) բաժնի համաձայն: Եթե տարածքային կենտրոնը որոշի, որ երեխան չունի զարգացման հաշմանդամություն, տարածքային կենտրոնը պետք է որոշի, թե արդյոք երեխան ժամանակավորապես իրավասու է Լանտերմանի օրենքի ծառայությունների համար: Եթե տարածքային կենտրոնը որոշի, որ երեխան չունի զարգացման հաշմանդամություն և ժամանակավորապես իրավասու չէ Լանտերմանի օրենքի ծառայությունների համար, ապա տարածքային կենտրոնը պետք է համապատասխան ծանուցում տա՝ համաձայն W&I օրենսգրքի 4701 բաժնի:

Ժամանակավոր իրավասություն ունեցող երեխաների վերագնահատում
Ժամանակավորապես իրավասու երեխան պետք է վերագնահատվի հինգ տարեկան դառնալուց առնվազն 90 օր առաջ: Երեխան պետք է համապատասխանի W&I օրենսգրքի 4512(a)(1) բաժնում սահմանված զարգացման հաշմանդամության սահմանմանը, որպեսզի հինգ տարեկանում իրավասու լինի տարածքային կենտրոնի շարունակական ծառայություններ ստանալու համար:

Տարածքային կենտրոնի ծառայություններն այն երեխայի համար, որը ժամանակավոր իրավասու էր և չի համապատասխանում W&I օրենսգրքի 4512(a)(1) բաժնի սահմանմանը, ավարտվում են, երբ երեխան դառնում է հինգ տարեկան: Եթե առաջարկվող գործողության մասին ծանուցումն ստանալուց ոչ ուշ, քան 10 օր հետո բողոքարկում է ներկայացվում ոչ իրավասու լինելու վերաբերյալ, տարածքային կենտրոնի ծառայությունները, որոնք երեխան ստանում էր ժամանակավոր իրավասության ժամանակ, կշարունակվեն բողոքարկման գործընթացում, ինչպես նշված է W&I օրենսգրքի 4715 բաժնում:

Տարածքային կենտրոնի գործադիր տնօրեններ
5 օգոստոսի 2021 թ.
Էջ երրորդ

Տարածքային կենտրոնի գործերի փոխանցումներ
Համաձայն W&I օրենսգրքի 4643.5 բաժնի, եթե երեխան որոշվել է որպես տարածքային կենտրոնի կողմից ծառայությունների ժամանակավոր իրավասու, ապա երեխան նույնպես պետք է ժամանակավորապես իրավասու համարվի ցանկացած այլ տարածքային կենտրոնի կողմից մինչև իր հինգերորդ տարեդարձը, եթե երեխան տեղափոխվել է նահանգի այլ վայր:

«Ս» կարգավիճակի լատինատառ ծածկագիրը
Զարգացման ծառայությունների վարչությունն աշխատել է տարածքային կենտրոնի ներկայացուցիչների և SANDIS-ի հետ՝ ավելացնելու նոր կարգավիճակի «Ս» լատինատառ ծածկագիրը, որը կօգտագործվի ժամանակավորապես իրավասու համարվող երեխաների կոդավորման համար: «Ս» կարգավիճակի լատինատառ ծածկագիրն այժմ հասանելի է օգտագործման համար: Խնդրում ենք տեղեկացնել ձեր գործերի կառավարման անձնակազմին, համակարգի օպերատորներին և այլ անձնակազմին, ըստ անհրաժեշտության, նոր կարգավիճակի ծածկագրի նպատակի մասին:

Տարածքային կենտրոնները պետք է անմիջապես սկսեն տեղեկատվություն տրամադրել և կրթել իրենց տեղական համայնքներին ժամանակավոր իրավասության վերաբերյալ:

Եթե այս նամակագրության հետ կապված հարցեր ունեք, խնդրում ենք կապվել ինձ հետ brian.winfield@dds.ca.govհասցեով կամ (916) 654-1897 հեռախոսահամարով:

Հարգանքներով՝

Բնօրինակը ստորագրված է՝

ԲՐԱՅԵՆ ՈՒԻՆՖԻԼԴ (BRIAN WINFIELD)
Տնօրենի գլխավոր տեղակալ

Կից փաստաթղթեր

Պատճենը՝ Տարածքային կենտրոնի կառավարիչներ
Սպառողների սպասարկման տարածքային կենտրոնի տնօրեններ
Տարածքային կենտրոնի համայնքային ծառայությունների տնօրեններ
Տարածքային կենտրոնի գործակալությունների ասոցիացիա
Nancy Bargmann, Department of Developmental Services
Erica Reimer Snell, Department of Developmental Services
Maricris Acon, Department of Developmental Services
Jim Switzgable, Department of Developmental Services